ՀՏԴ 37(091)

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ

Սուսաննա Ջանիկյան
մ.գ.թ., դոցենտ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայաստան

Անոտացիա

Հոդվածում դիտարկված են Վարդան Արևելցու մանկավարժական հայացքները: Ներկայացված են դաստիարակության նպատակի հիմնախնդրի վերաբերյալ հայ մտածողի հայեցակարգային դրույթները, որոնք այսօր էլ արդիական են: Խորությամբ վերլուծված են մարդասիրական մանկավարժության հենքային սկզբունքները, մեթոդաբանական մոտեցումները և դաստիարակության համակարգի բաղադրիչները:

Բանալի բառեր՝ *դաստիարակության նպատակ, բարոյական դաստիարակություն, հայ երաժշտության պատմություն, իրավական դաստիարակություն, հոգևոր արժեքներ, նորարարական մոտեցումներ:*

Դաստիարակության նպատակի հիմնախնդիրը մշտապես զբաղեցրել է մարդկությանը՝ սկսած հնագույն ժամանակներից: Դաստիարակության նպատակը համակողմանի և ներդաշնակ զարգացած անձն է, ով տիրապետում է գիտական գիտելիքների հիմունքներին, ունի գիտական աշխարհայացք, կայուն արժեհամակարգ, մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային, քաղաքացիական, իրավական, տնտեսագիտական, հայրենասիրական, էկոլոգիական, սեռականդաստիարակվածություն, որոնք անձի մեջ դրսևորվում են միմյանց փոխկապված ամբողջության մեջ և ապահովում են հասարակության մեջ նրա կենսագործունեությունը[1]: Դաստիարակությունը՝ որպես հասարակական երևույթ, ծագել ու զարգացել է մարդկության հետ, սակայն պատմական տարբեր ժամանակաշրջաններում լուծել է իր առջև դրված դաստիարակչական տարբեր խնդիրներ՝ կախված հասարակության զարգացման մակարդակից և քաղաքական կառուցվածքից:

Դաստիարակության նպատակի հիմնախնդրին է անդրադարձել նաև միջնադարի համբավաշատ ուսուցչապետ, գրող, թարգմանիչ և ազգային հասարակական գործիչ, «նոր լուսաւորիչ», «եռամեծ», «արդիւնական» Վարդան Արևելցին: Վարդան Արևելցին ծնվել է մոտավորապես1197-1200 թվականներին, Գանձակի գավառում, որտեղ ստացել է իր նախնական կրթությունը: Այնուհետև ուսանել է Նոր Գետիկ վանքում՝ հռչակավոր իրավագետ և մանկավարժ Մխիթար Գոշի մոտ, հիմնական կրթություն է ստացել Տավուշի գավառի Խորանաշատ վանքում՝ գիտնական-մանկավարժ Հովհաննես

Վանականի մոտ: Վարդան Արևելցին մանկավարժական լայն գործունեություն է ծավալել Կայենաբերդի ս.Անդրեի վանքում՝ հիմնելով դպրոց, ուր դասավանդել է մոտ ութ տարի, ապրել և գործել ուսումնագիտական խոշոր կենտրոն Հաղպատի ու Սանահինի վանքերում:

1240-1252 թվականներին նա Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի հորդորանքով մնացել է Կիլիկիայում և եղել արքունիքին ու կաթողիկոսարանին շատ մոտ կանգնած հեղինակավոր անձնավորություն՝ ուսուցիչ և խորհրդական: Վ.Արևելցին իր կյանքի վերջին տարիները անցկացրել է Խորվիրապի վանքում՝ հիմնելով միջնադարյան բարձրագույն դպրոց: Նրա դպրոցի համբավը տարածվել է ամենուր, նրա երևելի սաներն են եղել գիտնական-մատենագիր Հովհաննես Երզնկացին, գիտնական-վարդապետ Գևորգ Սկևռացին, միջնադարի խոշոր մանկավարժ Ներսես Մշեցին և այլք:

Վարդան Արևելցու մանկավարժական հայացքները արտահայտված են նրա «ժղլանք», «Խրատական թուղթ», «Շրջաբերական թուղթ», «Սահմանք» ստեղծագործություններում, որոնք տարիներ շարունակ օգտագործվել են որպես ուսումնական ձեռնարկներ: Նա մեծ կարևորություն է տվել աշակերտների ներդաշնակ ու բազմակողմանի դաստիարակությանը, նրանց բնավորության և հոգեկերտվածքի, բարոյական նկարագրի և արժեհամակարգի ձևավորմանը: Վ.Արևելցին, կարևորելով մարդու բարձրարժեքության գաղափարը, գտնում էր, որ իր աշակերտները կոչված են «առաջնորդ» լինելու, կանխորոշելու հասարակական և գիտական մտքի զարգացման հեռանկարները: Առաջնորդվելով դաստիարակչական հայեցակարգի հիմնադրույթներով՝ մեծ մանկավարժը իր սաներին ներկայացնում էր մի շարք պահանջներ՝ նախ և առաջ նրանք «անկատար» չպիտի լինեն,պետքէլինեն բարի, ջանասեր, ճշմարտախոս, հայենասեր: Դաստիարակության նպատակի հիմնախնդրի վերաբերյալ արժեքավոր և արդիական գաղափարներ կարելի է գտնել Վ.Արևելցու ճառերում, խրատներում, ներբողներում: Նա ձգտում է խթանել իր աշակերտ-ընթերցողների մտածողությունը, դիրքորոշումները, ձևավորել հասարակական, քաղաքական գիտակցությունը, սեփական ժողովրդին ծառայելու նվիրվածությունը, նրա ապագայի նկատմամբ լավատեսորեն տրամադրվելու անհրաժեշտությունը: Նասերունդների դաստիարակության գործում կարևորում էր հայրենասիրական դաստիարակությունը՝ նշելով, որ սոցիալ-քաղաքական բազմապիսի տառապանքները չպետք է վհատեցնեն, այլ փոխարենը պետք է ճանաչեն «ազգն սեփական», նրա ազգային արժեքներն ու ավանդույթները, մեծ հարգանք ու սեր տածեն հայ մշակույթի և նրա երախտավորների նկատմամբ՝ որպես ազգային ինքնության պահպանման գրավական:

Ուշագրավ է այն փաստը, որ մեծ մանկավարժը մատաղ սերնդի դաստիարակության հարցերը դիտարկում էր նաև կրոնական գաղափարախոսության տեսանկյունից: Վարդան Արևելցին, Աստվածաշունչը մեծագույն արժեք համարելով, խստագույնս դատապարտում էր «կրոնական ու քաղաքական նվաճողական նկրտումները» և համակողմանի ու ներդաշնակ անձի զարգացման, գիտական

աշխարհայացքի ձևավորման գործում կարևորում կրոնական-քրիստոնեական դաստիարակությունը:

Վարդան Արևելցու կողմից մեծ ուշադրության է արժանանում մարդն ու մարդկայինը: Արարչագործության պսակը մարդն է՝իր բանականությամբ ու հոգևոր բարոյական էությամբ: Ըստ Վ.Արևելցու՝ մարդիկ տարբեր են լինում. լավ ու վատ, բարի ու չար, սակայն մարդը բնությունից միայն «բարի» է ստեղծվել, բացասական բոլոր հատկանիշները ածանցավոր են, ձեռքբերովի: Մարդու մեջ ամենագնահատելին «բանիւ» լինելն է՝ խոսքի, մտքի, բանականության տեր լինելը, որի միջոցով էլ նա տնօրինում է իր երկրային ողջ կյանքը: Մեծ բարոյախոսը գտնում էր, որ մարդը բարի է ի ծնե, նապարտավոր է լինել արդար, օգնել ընկածներին, սիրել ոչ միայն մերձավորներին, այլ նիր նմանին առհասարակ:

Արևելցին չէր ընդունում գողությունը, շվայտությունը, նախանձը, ցանկասիրությունը, սպանությունը, սուտ երդում տալը: Բարկությունը, ըստ քրիստոնեական բարոյականության, ծանր մեղք է և հաճախ դժբախտությունների առիթ է դառնում, սակայն Արևելցին գտնում է, որ «չարիքների» դեմ բարկանալը, ըմբոստանալը, զայրանալը նույնիսկ ազնիվ պարտավորություն է, որպեսզի դրանք կյանքից արմատախիլ արվեն. «Յերկուս բաժանի բարկութիւն՝ բարեաց և չարեաց. ընդդէմ չարեաց ախտիցն բարկանալ պարտ է» [7]: Ըստ Վ.Արևելցու՝ ուրախությունն էլ իր չափն ու նպատակն ունի, այն չպետք է գռեհիկանա ու չարաշահվի, ամենափառավոր կյանքն էլ անցողական է, մնայուն ոչինչ չկա՝ ոչ փառք, ոչ գեղեցկություն և ոչ էլ ամենաշռայլ վայելքը:

Վարդան Արևելցին հայ իրականությանը հայտնի է որպես իրավագետ. այդ են վկայում նրա «Խրատական թուղթ», «Շրջաբերական թուղթ», «Սահմանք» կանոնական բնույթի երկերը, որոնք ներկայացնում են սոցիալ-քաղաքական, իրավական, բարոյական, մատենագրական և մշակութային մեծ հետաքրքրություն: Հատկապես Զագավանից ժողովի «Սահմանք»-ում արտահայտված են նրա իրավագիտական, բարոյական ու մանկավարժական հայացքները: Դրանք ունեն գործնական, օրվա անմիջական, հրատապ խնդիրներին առնչված բովանդակություն ու դաստիարակչական նպատակ, զերծ են տեսական, կրոնաաստվածաբանական խնդիրների արծարծումից: «Սահմանք»-ում քննված են հասարակական բարքերը: Վ.Արևելցու նպատակն է հասարակությունը պահել առողջ, մաքուր, առաքինի, վանականությանը ազատել հոգեբարոյական խեղումներից, կենցաղային մեղսագործությունից, անբանությունից: Վ.Արևելցու տեսադաշտից չի վրիպել հասարակության ամենակարևոր օղակը՝ ընտանիքը:Նա չէր ընդունում քաղաքացիական իրավունքի կոպիտ ոտնահարումը՝ անչափահասների ամուսնությունը, որը բերում էր բազմաթիվ չարիքներ ու հաճախ ողբերգական ավարտ էր ունենում: Բարոյախոս-մանկավարժը կարևորում էր նորածինների մկրտությունը. «Իսկ երբ արդեն սերնդագործություն է տեղի ունեցել, և նորածինները մկրտվել են, հարկ

է անմիջապես զբաղվել նրանց դաստիարակությամբ, ուսուցանել խաչ հանել, ծունր դնել, ասել եկեղեցու Հավատո հանգանակի գեթ ամենատարրական դրույթներ» [6]:

Վստահաբար կարող ենք փաստել, որ Վ.Արևելցու դաստիարակության այս տեսական դրույթները ոչ միայն միջնադարում, այլև այսօր կարևոր են ներընտանեկան հարաբերությունները ամուր հիմքերի վրա դնելու և հասարակությանը պիտանի անհատներ, եկեղեցուն էլ օրինակելի հավատացյալներ դաստիարակելու համար: Նա գտնում էր, որ քահանան սոսկ ծիսակատար չէ, նա դաստիարակի իրավունքով ու աչքերով պետք է դիտի շրջապատը և որպես «հայր» հետևի իր ծխում տեղի ունեցած անցուդարձին, որպեսզի հայ մարդը, քաղաքացին, հավատացյալը լինի ազնիվ ու մաքուր: Վ.Արևելցին շեշտադրում էր ընտանիքի, ծնողների անփոխարինելի դերը անձի ձևավորման գործում և արժևորում սերը, հարգանքը ծնողների հանդեպ: Սակայն այդ սերը պետք է լինի ճշմարիտ, անկեղծ, ինքնաբուխ և ոչ իբրև երախտիքի հատուցում կամ շնորհ, քանի որ ոչ ոք չի կարող իր ծնողներին լիովին երախտահատույց լինել: Վ.Արևելցին լուրջ մտահոգված էր հասարակության դաստիարակությամբ և խստորեն դատապարտում էր «յիշոցնատուութիւն»-ը՝ հայհոյանքը՝ այն համարելով խաթարված բարոյականության ցայտուն դրսևորում: Նա գտնում էր, որ «հայհոյիչը» այլասերված է, չունի ամոթի, երախտագիտության, խղճի զգացում, զուրկ է մարդկային աստվածապարգև արժանիքներից, չարիք է հասարակության և եկեղեցու համար [2]:

«Շրջաբերական թղթի» կանոններում Վ.Արևելցին խստորեն դատապարտում էր կաշառքը, եկեղեցական սրբազան խորհուրդներ կնունքը և պսակը, ինչպես նաև թաղումը «զրույցի ու ծաղրի» ենթարկելը, «ազգական արյունակիցների» միջև ամուսնությունը: Ըստ նրա՝ աշխարհիկ իշխանավորները, նույնիսկ թագավորը, մանկավարժները, հոգևորականները պետք է իրագործեն կանխարգելիչ միջոցներ՝ «այրերին, կանանց, փոքր տղաներին ու աղջիկներին հավաքելով եկեղեցի և խրատելով ըստ հարկի» [5, էջ 304]:

Դեռևս միջնադարում Վարդան Արևելցին այն կարծիքին էր, որ դաստիարակության գործընթացի արդյունավետությունը պայմանվորված է տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման սկզբունքով: Այդ է վկայում նրա այն միտքը, որ քահանան որպես դաստիարակ տարին երեք անգամ պետք է եկեղեցի հրավիրի «զարս և զկանայս, և զկուսան աղջկունս և զկուսան կտրճերն» ու նրանց տա խրատ իրենց հասակի ու վարքի համեմատ՝ «զի ամէն հասակի և վարուց և բարուց խրատ ուրիշ է» [4,էջ 284]:

Խոսելով ազգագրական, հավատալիքային, ծիսական, հմայական խնդիրների մասին ՝ Վ. Արևելցին չէր ընդունում սնոտիապաշտությունը, դեռևս հեթանոսությունից պահպանված սովորույթներն ու բարքերը: Նա հայ ընտանիքում կարևորում էր քրիստոնեական, աշխատանքային ու բարոյական դաստիարակությունը, գտնում էր, որ ծնողները երեխաներին պետք է սովորեցնեն խաչ հանել ու աղոթքներ մրմնջալ, աշխատանքային ու առևտրական հարաբերություններում իրար չխաբեն, արժևորեն

եկեղեցական ու ազգային ավանդույթները: Պետք է նշել, որ Վ.Արևելցին խնդրո առարկա է դարձրել առօրյա, գործնական, հասարակական դաստիարակչական խնդիրները:

Վ.Արևելցու սահմանք-կանոնները անզոր քարոզներ ու խրատներ չեն, այլ իրավական ուժ ունեցող գործնական որոշումներ, դրույթներ, որոնց նպատակային կիրառումը հենքային է իրավական ու բարոյական դաստիարակության իրականացման գործում: Ըստ Փ.Անթապյանի՝ «Վարդան Արևելցու համար իրավունքը ամենից առաջ բարոյական կատեգորիա է, կոչված կարգավորելու թերևս ոչ այնքան սոցիալ-հասարակական հարաբերությունները, որքան հասարակական մարդու էությունը, բարոյական համոզմունքները, խիղճը, քանի որ մարդուն արժեվորողն ու զարդարողն էլ այս վերջիններն են» [2,էջ 120] :

Վարդան Արևելցին մեծ տեղ է հատկացնում նաև սովորողների գեղագիտական դաստիարակությանը՝ «Ժղլանք» երկում անդրադառնալով հայ երաժշտության պատմությանը: Նրա մեկնաբանություններով՝ թե ով է կատարել ձայների տեսակների առաջին դասակարգումը, որ երաժիշտն ինչպիսի նվագարան է պատրաստել, ովքեր են գործածել ծնծղա, տավիղ, քնար, փողային նվագարաններ, սկիզբ է դրվում գեղագիտական ճանաչողության ձևավորմանը: Ինչ խոսք, այս գիտելիքները երաժշտության պատմության ամենանախնական տեղեկություններն են և երաժշտական գիտելիքների առաջին նշույլները, սակայն էական նշանակություն ունեն մշակութային արժեքների փոխանցման գործում:

Վ.Արևելցին կարևորում էր եկեղեցական երաժշտության ու երգեցողության դերը անձի գեղագիտական, հոգևոր դաստիարակության գործում՝ կարևորելով երաժշտության կատարումն ու մեկնաբանումը. «Զաւետարանն յառջի ձայնէ պատեհ է կարդալ և զառաքեալն՝ յերրորդէ, զմարգարէան՝ ի չորրորդէ. և կարդացողին նմանեցնել պիտի զիւր խօսքն գրոցն ասողին և պատճառին՝ թէ խրատական է, թէ աւաղական է, թէ ըղձական է, թէ սպառնական է, թէ ողոքական է և այլ այսպիսիք» [3]: Այսինքն՝ կարող ենք ասել, որ Վ.Արևելցին անձի կառուցվածքում կարևոր բաղադրիչ է դիտարկել գեղագիտական ճաշակը:Գնահատելով հայ մարդուն, նրա գիտական և ստեղծագործական մեծ ներուժը՝ Վ.Արևելցին կոչ էր անում մատաղ սերնդին հաղորդակից դարձնել ազգային, մշակութային, համամարդկային արժեքներին:

Այսպիսով, ամփոփելով Վարդան Արևելցու իմաստասիրական հայացքները՝ ևս մեկ անգամ գիտակցում ենք, որ հայ մանկավարժական միտքն իր զարգացման բոլոր փուլերում պարունակել է նորարարական, կառուցողական գաղափաներ, արժեքավոր տեսանկյուններ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հիմնահարցի վերաբերյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., ՍահակյանԱ., Մանկավարժություն, -Եր.:Մանկավարժ, 2005, -454 էջ:
2. Անթապյան Փ., Վարդան Արևելցի գիրք Բ, Երևան, 1989:

3. Ժղլանք, ձեռ. N750, թ. 119 ա:
4. Խաչիկյան Լ., Խրատական թուղթը:
5. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց:
6. Հ ովսեփյան Գ, Ձագավանից ժողովը:
7. Սաղմոսաց, ձեռ. N1190, թ. 23ա:

РЕЗЮМЕ

Проблема цели воспитания в педагогических взглядах ВарданаАревелци

Сусанна Джаникян

Ключевые слова: цель воспитания, педагогические взгляды, нравственное воспитание, правовое воспитание, этнические, духовные ценности, музыкальные знание.

В статье рассматриваются педагогические взгляды Вардана Аревелци. Представлены концептуальные основы проблемы воспитания. Анализированы компоненты воспитательной системы инекоторые принципы гуманистической педагогики.

SUMMARY

The problem of upbringing purposes in pedagogical outlooks of Vardan Areveltsi

Susanna Janikyan

Keywords: the upbringing purposes, pedagogical outlooks, moral upbringing, law-upbringing, upbringing problems, national, religious values, knowledge of music.

In this article are discussed the pedagogical views of Vardan Areveltsi. There are presented some of his conceptual approaches to the problem of upbringing purposes. Here are analyzed the components of upbringing system, the value of the man’s role.